

ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՁՐԵՐ / 2021թ. 2-րդ եռամսյակ/

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներն իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 109 ստորերկրյա ջրաղբյուրում, որոնք ներառում են 25 շատրվանող հորատանցք, 44 չշատրվանող հորատանցք և 41 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Նմուշառումը կատարվում է տարին 2 անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին՝ 51 դիտակետերից:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնաղբյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը և նկատվել է կայուն վիճակ՝ ծախսի աննշան ավելացումով:

Հաղարծինի N2058 դիտակետում մայիսին կատարվել է որակի մոնիթորինգ, որտեղ ցուցանիշները չեն գերազանցում թույլատրելի սահմանային կոնցենտրացիաները:

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 39 դիտակետում՝ 11 բնաղբյուրում, 7 շատրվանող և 21 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Արարատյան արտեզյան ավազանի N 105, N108, N198, N1533, N1537, N2001, N2002, N2018, N2021, N2024, N2025, N2026, N2055 և N2057 դիտակետերում նկատվել են ջրի մակարդակի իջեցումներ մինչև 0.6 մետր, որոնք պայմանավորված են ոռոգման շրջանում մեծաքանակ հորատանցքերի աշխատանքով, իսկ N152 և N192 դիտակետերում, որտեղ նկատվել են առավելագույն իջեցումները, դիտարկումները կատարվել են պոմպի աշխատանքի ժամանակ:


Շիրակի մարզի դիտակետերում հիմնականում նկատվում է աղբյուրների ծախսերի կայունացում՝ որոշակի անկումներով: Աշոցքի N2039, N2040 և Յոդամարզի N2077 դիտակետերում նկատվում է աղբյուրի ծախսի ավելացում: Առափիի N2042 դիտակետի ջրհորում ջրի մակարդակը կայուն է, իսկ Ախուրյանի N2043 դիտակետի ջրհորում նկատվել է իջեցում (0.7 մ):

Ախուրյանի ՋԿՏ-ի 19 դիտակետում մայիս ամսին կատարվել է որակի մոնիթորինգ, որտեղ գրունտային ջրհորներում ընդհանուր լուծված աղերի և նիտրատների ցուցանիշները գերազանցում են թույլատրելի սահմանային կոնցենտրացիաները, որը կրում է բնական բնույթ:

Բնադրյուններ

Ախուրյանի ՋԿՏ


Ծախս, լ/վ



Դիտակետ

Ախուրյանի ՋԿՏ

Մակարդակ, մ




Դիտակետ

Շատրվանոց հորատանցքեր

Ախուրյանի ՋԿՏ

Ծախս, լ/վ




Դիտակետ

Չշատրվանող հորատանցքեր

Ախուրյանի ՋԿՏ


Մակարդակ, մ



Չշատրվանող հորատանցքեր

Ախուրյանի ՋԿՏ


Մակարդակ, մ



Գրունտային ջրհորներ


Ախուրյանի ՋԿՏ

Մակարդակ, մ




Ընդհանուր լուծված աղեր

Ախուրյանի ՋԿՏ



Նիտրատ իոն

Ախուրյանի ՋԿՏ



Հրագրանի ջրավազանային կատարման տարածք

Հրագրանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 27 դիտակետերում՝ 6 բնադրյուրում, 9 շատրվանող և 12 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:


Արարատյան արտեզյան ավազանի տարածքի (Մասիս, Դաշտավան, Սիս, Հայանիստ, Հովտաշեն), NN 1519, 1526, 1535, 2008 և 2053 դիտակետերում նկատվել է ստորերկրյա ջրի ծախսի իջեցումներ մինչև 0.92լ/վ: Դիտակետերից համեմատաբար կայուն ծախս (մակարդակ) ունեն N1536 Սիս, N2003 Սիս, N2007 Ջրահովիտի շատրվանող հորատանցքերը:

Աննշան մակարդակի իջեցումներ են նկատվում Արարատյան արտեզյան ավազանի նախալեռնային գոտու N2085 (Արագած), N2086 (Դոդոս), N2087 (Լեռնամերձ) և N2089 (Կարբի) դիտակետերում:

Հրագրան գետավազանի N246 (Բջնի) դիտակետում սկսած հունիս ամսից նկատվում է ծախսի աննշան իջեցում, N1832 դիտակետում, որը իրենից ներկայացվում է ձորակի դրենաժային ջրեր, կապված մթնոլորտային տեղումների բացակայության հետ հունիս ամսին նկատվել են ծախսի կտրուկ իջեցումներ:

Նիգավանի N2010 և N2011 ջրհորերում նկատվում է գրունտային ջրերի մակարդակի իջեցում, իսկ Արարատյան արտեզյան ավազանի N2023 (Խորոնք) դիտակետում, որը իրենից ներկայացնում է գրունտային ջրհոր, նկատվում է մակարդակի աննշան բարձրացում կապված ոռոգման շրջանի հետ: Ջրի ծախսի որոշակի ավելացում կա Ապարանի N2051 «Սիրո» աղբյուր դիտակետում:


Հրագրանի ՋԿՏ-ի 11 դիտակետում մայիս ամսին կատարվել է ջրի որակի մոնիթորինգ, որտեղ ցուցանիշների փոփոխությունները (այդ թվում N2053 շատրվանող հորատանցքում լուծված աղերի բարձր պարունակությունը) կրում է բնական բնույթ:



Շատրվանոցի հորատանցքեր

Հրազդանի ՋԿՏ


Ծախս, լ/վ



Չշատրվանոցի հորատանցքեր

Հրազդանի ՋԿՏ


Մակարդակ, մ



Գրունտային ջրեր


Հրազդանի ՋԿՏ

Մակարդակ, մ




Ընդհանուր լուծված աղեր

Հրագրանի ՋԿՏ



Նիտրատ իոն

Հրագրանի ՋԿՏ





Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 16 դիտակետում՝ 5 բնադրյուրում, 6 շատրվանող և 5 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Ակունքի N31 և N902 դիտակետերում նկատվել են ծախսի նշանակալի փոփոխություններ, որոնք պայմանավորված են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ջրառի քանակով և դրա բացթողումներով:


Վարդենիսի և Գանձակի շատրվանող հորատանցքերում (N1809, N1810 և N2013), Ակունքի N1053 աղբյուրում նկատվել են ստորերկրյա ջրի ծախսի բարձրացումներ: Վարդենիսի N1811 դիտակետում ծախսը կայուն է:

Սևանի ՋԿՏ-ի 6 դիտակետում մայիս ամսին կատարվել է որակի մոնիթորինգ, որտեղ ցուցանիշները չեն գերազանցում թույլատրելի սահմանային կոնցենտրացիաները:




Շատրվանոցի հորատանցքեր
Մակարդակ, մ

Սևանի ՋԿՏ




Շատրվանոցի հորատանցքեր
Ծախս, լ/վ

Սևանի ՋԿՏ




Ընդհանուր լուծված աղեր

Սևանի ՋԿՏ



Նիտրատ իոն

Սևանի ՋԿՏ





Արարատյան ջրավազանային կառավարման տարածք




Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 23 դիտակետում՝ 10 բնադրյուրում, 3 շատրվանող և 10 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Մալիշկա (N502), Եղեգնաձոր (N787), Կեչուտ (N2060) բնակավայրերի դիտակետերում նկատվել են ծախսի ավելացումներ, Գառնիի (N845, N2046, N2047), Ագարակաձորի (N785) և Ջեղեայի (N2050) դիտակետերում ծախսի աննշան փոփոխություններ՝ կայունացման միտումով:

Արարատյան արտեզյան ավազանի չշատրվանող հորատանցքերի (Եղեգնավանի N2065, Արտաշատի N2069, Լուսառատի N2074, Դալարի N2072) դիտակետերում նկատվում են ստորերկրյա ջրի մակարդակի իջեցումներ՝ 0.14 - 0.7 մետր:


Արարատյան ՋԿՏ-ի 10 դիտակետում մայիս ամսին կատարվել է որակի մոնիթորինգ, որտեղ ցուցանիշների փոփոխությունները (այդ թվում N2067 և N2069 հորատանցքում լուծված աղերի բարձր պարունակությունը) կրում են բնական բնույթ:






Գրունտային ջրհորներ
Մակարդակ, մ

Արարատյան ՋԿՏ




Ընդհանուր լուծված աղեր

Արարատյան ՋԿՏ



Նիտրատ իոն

Արարատյան ՋԿՏ





Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտա-
դիտարկումներ կատարվել են 7 բնաղբյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը
և ծախսը:


Գորհայք N529, Սպանդարյան N537, Գորիս N899 և N1399, Անգեղակոթ N1175 և
N1323 դիտակետերում նկատվում են համեմատաբար կայուն ծախսեր, աննշան
բարձրացման միտումով, բացի Շաքիի N532 աղբյուրներից, որտեղ նկատվել է ծախսի
աննշան իջեցում:

Հարավային ՋԿՏ-ի 4 դիտակետում մայիս ամսին կատարվել է որակի մոնիթորինգ,
որտեղ ցուցանիշները չեն գերազանցում թույլատրելի սահմանային կոնցենտրացիաները:



Ընդհանուր լուծված աղեր

Հարավային ՋԿՏ



Նիտրատ իոն

Հարավային ՋԿՏ

